ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

21 մարտի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

40
(2706)

100 դրամ

քաղաքացիական պայմանագիր
կոմսակցություն

քաղաքացիական պայմանագիր

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻ ՍՐՏՈՎ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կոռուպցիոն վերջին սկանդալային բացահայտումներից հետո ՔՊ-ականները երես են թեքել իրենց թիմակցից՝ Արսեն Թորոսյանից, ում պաշտոնավարման օրոք էլ կորոնավիրուսի դեմ պայքարի քողի ներքո գումարներ են մսխվել պետբյուջեից:

Բանն այն է, որ իր նախկին տեղակալի՝ Գեւորգ Սիմոնյանի եւ նույն գործով մյուս աղմկոտ ձերբակալություններից հետո Արսեն Թորոսյանը տարբեր պատրվակներով հանդիպումներ է փնտրել թիմակիցների հետ, զրուցել է նրանց հետ, որպեսզի նախ թիմակիցների տրամադրությունները ստուգի, հասկանա՝ ինչպես են տրամադրված իր նկատմամբ, բացի դա, փորձել է նրանց սիրտը շահել, տարբեր արդարացումներ բերել, որպեսզի մեղադրանքների սլաքներն իր ուղղությամբ չգան:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, սակայն, թիմակիցներին սիրաշահելու Թորոսյանի այս փորձերն ապարդյուն են անցել, ավելին՝ տեղեկացանք, որ ՔՊ-ականները շատ բացասական են տրամադրված Թորոսյանի նկատմամբ, միեւնույն ժամանակ զգուշավոր են նրա հետ, քանի որ չեն կարողանում հասկանալ՝ ի վերջո, Փաշինյանը մինչեւ ուր է պատրաստ գնալ, արդյոք թույլ կտա, որ բանը հասնի այն կետին, որ Թորոսյանին պատգամավորական մանդատից, անձեռնմխելիությունից զրկեն եւ կալանավորեն:

Տեղեկացանք, որ աղմկոտ ձերբակալություններին հաջորդող մի քանի օրերին Թորոսյանը շատ անտրամադիր է եղել, վախվորած, բայց, ըստ մեր աղբյուրների, վերջին մի քանի օրերին Թորոսյանի տրամադրությունն ակնհայտ բարձր է: Թիմակիցները չեն կարողանում հասկանալ՝ որն է Թորոսյանի այդչափ բարձր տրամադրության պատճառը: ՔՊ-ում կարծում են, որ Թորոսյանին, ի վերջո, հաջողվել է ինչ-որ շրջանակների համոզել, որ ինքը որեւէ մասնակցություն չի ունեցել այդ չարաշահումների մեջ, վստահեցրել, որ կարող են իրեն էլ հարցաքննել եւ տեսնել, որ ինքը «մաքուր է»:

ՔՊ-ում ոչինչ չեն բացառում, քանի որ Փաշինյանն իր թիմակիցների հետ բաց չի խոսում, մտերիմներ թիմում չունի, ուստի նրանից հասկանալի չէ՝ ինչ որոշում ունի նա՝ Թորոսյանի հետ կապված:

ՔՊ-ականներն էլ, կարելի է ասել, լուռ հետեւողների դերում են, չեզոք հարաբերություններ են պահպանում Թորոսյանի հետ, մինչեւ տեսնեն՝ Նիկոլ Փաշինյանն ինչ որոշում կկայացնի:

Մի բան հստակ է. ՔՊ-ականների մեծ մասի սրտով է Արսեն Թորոսյանի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները, քանի որ թե՛ նախարար, թե՛ վարչապետի աշխատակազմի ղեկավար եղած ժամանակ Թորոսյանը չոր ու կոպիտ է եղել իր թիմակիցներից շատերի հետ, անգամ չի էլ ցանկացել հանդիպել նրանց՝ արգելափակելով նրանց հանդիպումները Փաշինյանի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղարի որդու պաշտպանները դատարանի դահլիճում եւ նախաքննական մարմնում, ԱԱԾ-ում բանավոր կերպով հայտարարել են, որ կասկածներ ունեն, որ Իրավապահները Գրիգորի Խաչատուրովի հետեւից են ընկել նրա՝ 2021 թվականի հայտարարության պատճառով, որի ժամանակ ՊՆ գեներալը պահանջել է Նիկոլ Փաշինյանի հրաժարականը: Ասել է թե՝ նախաքննական մարմնում եւ դատարանի դռնփակ նիստում այդ հարցը բարձրացվել է: Նշենք, որ Գրիգորի Խաչատուրովը մարտի 16-ին կալանավորվեց եւ այժմ գտնվում է Վարդաշենի քրեակատարողական հիմնարկում: Ըստ Գլխավոր դատախազության՝ նրա նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել պաշտոնեական դիրքի օգտագործմամբ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքն օրինականացնելու (փողերի լվացում) համար: Գրիգորի Խաչատուրովը չի ընդունում մեղադրանքը: Արդյունքում՝ փետրվարի 21-ին Հակակոռուպցիոն դատարանը մերժեց նրան կալանավորելու ԱԱԾ միջնորդությունը, որից հետո Գլխավոր դատախազությունը հակակառուպցիոն դատարանի որոշման դեմ բողոք է տարել ՀՀ վերաքննիչ դատարան, ինչը դատավոր Մեսրոպ Մակյանը բավարարել է: Նշենք, որ Գրիգորի Խաչատուրովի պաշտպանները պնդում են, որ դա կարված ուղղորդված քրեական գործ է, որի վաղեմության ժամկետը 10 ամսից լրանում է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով հրավիրված ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանին ՔՊ-ականները որեւէ քաղաքական հարց չեն տվել, թե, օրինակ, ինչու նա պահանջեց Նիկոլ Փաշինյանի հրաժարականը: Փոխարենը ՔՊ-ականները, բերանները ջուր առած, 5 ժամ լսել են Օնիկ Գասպարյանի ելույթը, իսկ արդեն հարցուպատասխանի ռեժիմի ժամանակ տվել են որոշ հարցեր՝ պատերազմի հետ կապված, թե ում մեղքն էր, որ պարտվեցինք այս կամ այն տարածքում եւ այլն: Մեր հավաստի աղբյուրների փոխանցմամբ՝ Օնիկ Գասպարյանին հարց է տրվել Նիկոլ Փաշինյանի հայտարարության մասին. «Մենք պատերազմը պարտվել ենք այն պատճառով, որովհետեւ մեր բանակում գործել է հինգերորդ շարասյուն: Սա իմ համոզմունքն է մի շարք փաստերի վերլուծության արդյունքում»: Այսինքն՝ խոսքը դրսի դրդամբ ներքին խարդավանքների մասին է: ՔՊ-ականները ցանկալի պատասխան չեն լսել: Հավելենք, որ հաջորդը ԱԺ հանձնաժողով կգա ԳՇ նախկին պետ, մեղադրյալի աթոռին հայտնված Արտակ Դավթյանը:

Վերջին տարիներին Հայաստանում նկատվել է անչափահասների կողմից կատարված հանցագործությունների դեպքերի նվազում: Համաձայն ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների՝ 2022-ին անչափահասների կողմից արձանագրվել է հանցագործությունների կատարման 105 դեպք, նախորդ տարի՝ 147 դեպք, իսկ այս տարվա 2 ամիսներին՝ 10 դեպք: Ոստիկանությունից հայտնում են, որ անչափահասների հանցագործությունը կանխարգելելու համար կատարում են հատուկ եւ կանխարգելիչ միջոցառումներ:

ՉԿԱ ԵՐԱՇԽԱՎՈՐ

ՊԵՏՔ Է ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼ

Ադրբեջանի նախագահի վերջին ելույթում հնչած սպառնալից հայտարարություններ եւ դրանց հնարավոր հետեւանքների մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ադրբեջանագետ, ռազմական գիտությունների թեկնածու Տաթեւիկ Հայրապետյանի հետ:

-Տիկին Հայրապետյան, չնայած Հայաստանի իշխանությունների կողմից հնչեցվող միակողմանի խաղաղասիրական հայտարարություններին՝ Ադրբեջանի նախագահ Ալիեւն իր վերջին ելույթում հերթական սպառնալիքն է հնչեցրել Հայաստանի ու Արցախի հասցեին՝ հայտարարելով, թե եթե Հայաստանն ուզում է խաղաղ ապրել 29 000 քառակուսի կիլոմետրի վրա, պետք է Արցախը պաշտոնապես ճանաչի Ադրբեջանի կազմում: Ինչպե՞ս կմեկնաբանեք սա:

-Ադրբեջանի նախագահը հերթական հոգեբանական ու տեղեկատվական ծուղակն է ստեղծում՝ փորձելով այն միտքը սերմանել Հայաստանում ու Հայաստանի ներքաղաքական դիսկուրսում, որ եթե հրաժարվենք Արցախից, ապա խաղաղ կապրենք, մինչդեռ փաստերը լրիվ հակառակն են ասում: Այս օրինակը շատ եմ բերել. եթե հայ զինվորն այն ժամանակ կանգնած էր Ջրականում, ապա հիմա հակառակորդի թիրախի տակ է Ջերմուկը: Որքան Ադրբեջանին զիջում ես, այնքան էլ խոցելի ես դարձնում Հայաստանի Հանրապետությունը: Եթե այսօր Ադրբեջանն ամենաբարձր մակարդակով մեր երկիրը կոչում է Արեւմտյան Ադրբեջան եւ տարածքային նոր հավակնություններով է հանդես գալիս, կարծում եմ՝ սա ավելի խոսուն փաստ է, որ Ադրբեջանի ղեկավարությունը լրիվ այլ ծրագրեր ունի, ու այդ ծրագիրը Հայաստանն ամբողջությամբ վերացնելն է, իսկ Արցախից հրաժարումը միայն կարող է արագացնել այդ ծրագրի իրագործումը:

-«Եթե Հայաստանը չի ճանաչում մեր տարածքային ամբողջականությունը, ապա մենք չենք ճանաչի նրանց տարածքային ամբողջականությունը: Հայաստանը եւ դրա հետեւում կանգնած կեղծավոր երկրները պետք է իմանան, թե ինչ արդյունք կտա». սա եւս մեջբերում է Ալիեւի այդ ելույթից: Ըստ Ձեզ՝ «կեղծավոր» երկիր ասելով՝ ո՞ւմ է նկատի ունեցել Ալիեւը:

-Դժվար է կոնկրետ ասել՝ որ երկրին է նկատի ունեցել. եթե հետեւենք Ալիեւի քարոզչադաշտի միտումներին, ապա հիմնականում թիրախավորված են Ռուսաստանը, Իրանը, Հնդկաստանը, Ֆրանսիան: Այս քառյակն է համարվում Հայաստանի դաշնակից երկրներ, որոնք օժանդակում են Հայաստանին. հավանաբար, հենց այս երկրներին էլ նկատի ունի Ալիեւը: Ադրբեջանը վերջին շրջանում հաճախ է թիրախավորում նաեւ հայկական Սփյռուքը:

-Վերջերս Փաշինյանն իր ասուլիսում, ինչպես նաեւ կառավարության նիստի ժամանակ ոչ հուսադրող հայտարարություններ արեց Արցախի վերաբերյալ: Հստակ ասաց, որ բանակցությունները փակուղում են, ասաց, որ Ադրբեջանն Արցախում նոր ցեղասպանություն իրականացնելու մանդատ է ուզում: Ի՞նչ կասեք այս մասին:

-Փաշինյանը որեւէ նորություն չի ասել, նրա ասածը պարզ ճշմարտություն էր, որը հայտնի է 2020թ-ի նոյեմբերի 9-ից ի վեր: Ես չեմ հասկանում՝ ինչու էր պետք ավելի քան 2 տարի այդ ակնհայտ ճշմարտությունը հասկանալու համար: Դա արտացոլված էր Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության ելույթներում եւ գործողություններում: Բոլոր փաստերը հենց դրա մասին էին խոսում, որ Ադրբեջանը փորձում է փակուղի մտցնել գործընթացը եւ փորձում է ռազմական ճանապարհով իր կամքը թելադրել. ընդամենը պետք էր դրան համարժեք գործել եւ այսքան անիմաստ ժամանակ չվատնել՝ մարդկանց համոզելով, թե շուտով խաղաղություն կլինի:

-Առհասարակ, Ձեր գնահատմամբ՝ հայ-ադրբեջանական բանակցություններն ի՞նչ փուլում են այս պահին, իսկապես փակուղո՞ւմ են դրանք, թե՞, ամեն դեպքում, հնարավոր է կողմերն առաջիկայում համաձայնության գան:

-Կողմերն ինչպե՞ս կարող են համաձայնության գալ. համաձայնության համար պետք են դերակատարներ, որոնք ազդեցություն կունենան Ադրբեջանի վրա: Այսօր Ադրբեջանն անկառավարելի է, փորձում է իրեն դուրս դնել միջազգային իրավակարգից: Այն միջնորդ կողմը, որը կկարողանա ճնշումներ գործադրել ու ստիպել Ալիեւին հետ կանգնելու հայատյաց քաղաքականությունից, նա էլ կարող է հանդես գալ որպես հնարավոր խաղաղության երաշխավոր, բայց քանի դեռ չկա երաշխավոր կողմ, իրական խաղաղության մասին խոսելն ընդամենը պատրանք է կամ պարզապես ցանկություն, բայց իրականության հետ որեւէ աղերս չունի: Պետք է դրվանագիտական, քաղաքական, ռազմական ու մյուս բոլոր առումներով պատրաստ լինել ադրբեջանական ագրեսիան դիմակայելու եւ ոչ թե ձեռքները ծալած նստել ու ասել՝ գիտեք, Ադրբեջանը հարձակման է նախապատրաստվում: Նա դեռեւս տասնամյակներ առաջ է պատրաստվել. ընդամենը պետք էր պատրաստվել դրան դիմակայելու համար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՖՐԱԿՑԻԱՅԻ ԴԵ ՖԱԿՏՈ ՂԵԿԱՎԱՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հատկապես վերջին շրջանում ՔՊ խմբակցությունը դե ֆակտո ղեկավարում է Արթուր Հովհաննիսյանը, իսկ Հայկ Կոնջորյանն ընդամենը ֆրակցիայի դե յուրե ղեկավարան է: Կոնջորյանին շատ ՔՊ-ականներ անգամ չեն բարեւում: Եվ այդ առիթից օգտվելով՝ Հովհաննիսյանը կարողացել է այս ընթացքում ՔՊ-ականներին իր ազդեցությունը թելադրել՝ Կառավարության «փոստատար» իր կարգավիճակով: Բանն այն է, որ իշխանական պատգամավորներն իրենց քայլերը քննարկում են Հովհաննիսյանի հետ, քանի որ նա է կառավարության աշխատակազմի եւ ԱԺ-ի կապը դարձել: Հովհաննիսյանն անգամ հավակնում է ֆրակցիայի ղեկավարի պաշտոնին՝ օգտվելով ստեղծված իրավիճակից:

Կստացվի, թե ոչ՝ ժամանակը ցույց կտա, բայց այն, որ Արթուր Հովհաննիսյանն այս ուղղությամբ ջանքեր է գործադրում, փաստ է:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Արթուր Հովհաննիսյանը նախկինում թմրանյութերի ապօրինի շրջանառության համար բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանություն:

ԲՈՂՔԻ ԱԿՑԻԱՆԵՐ

Մարտի 15-ին Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը նշանակվել էր Բրյուսովի անվան համալսարանի ռեկտորի պաշտոնակատար, թեեւ բուհի հոգաբարձուների խորհուրդը դեկտեմբերի 9-ի տեղի ունեցած ընտրություններում նրան չէր ընտրել:

Ընտրությանը մասնակցում էր 2 թեկնածու՝ Կարինե Հարությունյանը եւ Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը:

Բուհի հոգաբարձուների խորհուրդը Կարինե Հարությունյանին վերընտրել էր ռեկտորի պաշտոնում՝ ձայների 12 -8 հարաբերակցությամբ:

Դավիթ Գյուրջինյանի նշանակումը միանշանակ չեն ընդունել: Նրանցից շատերը դասադուլ էին անում:

ArmLur.am-ի հետ զրույցում Բրյուսովի անվան համալսարանի պրոռեկտոր Ցոլակ Ակոպյանը պատմեց, որ, արդարադատության նախարարի որոշմամբ, դեռեւս մարտի 9-ին բուհի ժամանակավոր խորհուրդ էր ձեւավորվել, որն էլ, առանց համալսարանային տեղեկացնելու, մարտի 14-ին նիստ է արել, որի ժամանակ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին ընտրել է խորհրդի նախագահ, իսկ Դավիթ Գյուրջինյանին՝ Բրյուսովի անվան համալսարանի ռեկտորի պաշտոնակատար:

«Այս իշխանությունները թքած ունեն ցանկացած օրենքի կամ որոշման վրա, պատասխան են դրանց վրայով անցնել իրենց ուզածին հասնելու համար: Բուհում չի իրականացվել այդ նիստը, ենթադրում եմ՝ սրճարանում կամ էլ Ժաննա Անդրեասյանի տանն է այն անցկացվել: Ինձ մարտի 15-ին նախարարությունից գրությամբ են տեղեկացրել այդ մասին»,- ասաց Ցոլակ Ակոպյանը:

Վերջինս նաեւ պատմեց, որ ուսանողները վերջերս հանդիպել են ռեկտորի նորանշանակ պաշտոնակատարի հետ:

ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄՏԱՀՈԳԻՉ Է

ArmLur.am-ի զրուցակիցն է Իսպանիայի Կոնգրեսի պատգամավոր Ջոն Ինյարիտուն:

-Պարոն Ինյարիտու, ի՞նչ եք Դուք մտածում Բերձորի միջանցքի՝ արդեն 100 օր փակ մնալուց հետո ստեղծված իրավիճակի մասին:

-100 օր բլոկադայից հետո իրավիճակը շարունակում է մնալ անկայուն: Բոլորս տեսնում ենք, որ Ադրբեջանն անտեսում է Միջազգային դատարանի որոշումը՝ բացելու միջանցքը, եւ դեռ շարունակում է կատարել իր սադրանքներն ու սպառնալիքները:

-Այս իրավիճակում պատկերացնո՞ւմ եք, որ Հայաստանը կարող է խաղաղության պայմանագիր ստորագրել Ադրբեջանի հետ:

-Արցախում հայ ժողովրդի համար խաղաղության պայմանագիրը եւ արդար ու մշտական լուծումն իհարկե ցանկալի կլիներ, բայց, ցավոք, տեսնելով բռնակալ Ալիեւի եւ նրա բռնապետության գործողություններն ու ուղերձները՝ այն այնքան էլ իրատեսական չի թվում:

-Այս 100 օրերի ընթացքում պատշաճ արձագանք չենք ստանում միջազգային հանրության կողմից: Ըստ Ձեզ՝ ո՞րն է պատճառը:

-Կարծում եմ, որ միջազգային հանրության մեծամասնության ուշադրության կենտրոնում է միայն Ուկրաինան, իսկ մյուս կողմից էլ այլ պետություններ այս բուռն ժամանակներում Ադրբեջանի հետ գազի առեւտուր են անում: Իրավիճակը գնալով ավելի մտահոգիչ է դառնում:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

Ի՞ՆՉ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԿԳՆԱ

«Երեւանի ավագանու արտահերթ ընտրությունների մասին որոշում այս պահին չունենք, նման հարց չենք քննարկել»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Երեւանի ավագանու «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Արմեն Գալշյանը:

«Այս պահին քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատարը Լեւոն Հովհաննիսյանն է: Օրենսդրությամբ քաղաքապետի բացակայության ժամանակ պաշտոնակատար դառնում է առաջին տեղակալը:

Նա կլինի քաղաքապետի ԺՊ մինչեւ հերթական ընտրություններ. մենք նոր քաղաքապետ չենք ընտրի, քանի որ հերթական ընտրություններին ամիսներ են մնացել»,-ասաց Արմեն Գալշյանը:

Հիշեցնենք, որ Հրաչյա Սարգյանը հրաժարական էր տվել մարտի 17-ին:

Նշենք, որ Երեւանի ավագանու հերթական ընտրություններ սպասվում են աշնանը: Դրանք, ըստ ամենայնի, կանցկացվեն սեպտեմբերին: «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Երեւանի ավագանին ընտրվում է 5 տարի ժամկետով: Ավագանու նախորդ ընտրությունները կայացել էին 2018թ-ի սեպտեմբերին, որի ժամանակ Հայկ Մարությանն ընտրվեց քաղաքապետ: Ըստ ՀՀ ընտրական օրենսգրքի՝ Երեւանի ավագանու հերթական ընտրությունն անցկացվում է ավագանու լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 30, եւ ոչ ուշ, քան 20 օր առաջ, այսինքն՝ այս սեպտեմբերին արդեն ավարտվում են գործող ավագանու լիազորությունները: Ավագանու հերթական ընտրության օր նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԵԴՎԵԴԵՎԸ ՍՊԱՌՆԱՑԵԼ Է

Ռուսաստանի Դաշնության անվտանգության խորհրդի փոխնախագահ Դմիտրի Մեդվեդեւը կարծում է, որ Հաագայում Միջազգային քրեական դատարանի շենքին ռուսական հիպերձայնային հրթիռի դիպուկ հարվածի դեպքում ՆԱՏՕ-ն պատերազմ չի սկսի: Այս մասին քաղաքական գործիչը գրել է երկուշաբթի օրը սոցիալական ցանցի իր ալիքում՝ մեկնաբանելով Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին կալանավորելու ՄՔԴ որոշումը:

«Ավա՜ղ, պարոնայք, բոլորը քայլում են Աստծո եւ հրթիռների տակ: Միանգամայն հնարավոր է պատկերացնել Հյուսիսային ծովից եկող հիպերձայնային «Օնիքս»-ի նպատակային օգտագործումը ռուսական նավից Հաագայի դատարանի շենքում: Այն չի կարող խոցվել, ավաղ: Եվ դատարանը միայն՝ թշվառ միջազգային կազմակերպություն, ոչ թե ՆԱՏՕ-ի երկրների բնակչությունը: Հետեւաբար, նրանք պատերազմ չեն սկսի, նրանք կվախենան: Եվ ոչ ոք դրա համար չի զղջա»,- գրել է Մեդվեդեւը՝ դատավորներին կոչ անելով «ուշադիր նայել երկինք»:

ՄՔԴ որոշումը կհանգեցնի հրեշավոր հետեւանքների միջազգային իրավունքի համար. համոզված է ԱԽ փոխնախագահը:

«Մենք որոշեցինք դատել միջուկային տերության նախագահին «...», որը չի մասնակցում ՄՔԴ-ին նույն հիմքերով, ինչ Միացյալ Նահանգները եւ այլ երկրներ: Ակնհայտ է, որ ստացվել է ամենախիստ ներածականը»,- գրել է քաղաքական գործիչը:

«Հասկանալի է, որ գործնական արժեք չկա, բայց շնորհակալություն հիշելու համար»,- ասել է Մեդվեդեւը: Նրա կարծիքով՝ միջազգային իրավունքի համար հետեւանքները հրեշավոր կլինեն, քանի որ դա հիմքերի, իրավունքի սկզբունքների, այդ թվում՝ պատասխանատվության անխուսափելիության պոստուլատների փլուզումն է: Մեդվեդեւը կարծում է, որ այժմ ոչ ոք չի գնա որեւէ միջազգային ատյան, բոլորը կբանակցեն միմյանց միջեւ: «ՄԱԿ-ի եւ այլ կառույցների բոլոր հիմար որոշումները կփլուզվեն: Միջազգային հարաբերությունների ողջ համակարգի մռայլ անկում է սպասվում: Վստահությունը սպառվել է»,- ասել է Մեդվեդեւը:

ԿԳՈՐԾՈՒՂՎԻ

Վարչապետի որոշմամբ՝ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը մարտի 22-24 կգործուղվի Սանկտ Պետերբուրգ:

Նախարարի հետ ՌԴ կմեկնի նաեւ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության պետ Քնար Ղոնյանը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Անահիտ Ավանեսյանը եւ Քնար Ղոնյանը ՌԴ-ում կմասնակցեն «Առողջ հասարակություն» համաժողովին:

Գործուղման հետ կապված ծախսերը կկատարվեն Հայաստանի Հանրապետության պետբյուջեի հաշվին:

ՀԱՐԱՔԱՏՆԵՐՈՎ

ՍԻՍԻԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽԱՅՏԱՌԱԿ ՅՈՒՅԱԿՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Սիսիանում քաղաքապետի ընտրությունների կազմակերպումը խայտառակ գործընթացով է ուղեկցվում:

34 ընտրատարածքային ընտրական նոր հանձնաժողովը ընտրակարգում է Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջանները:

2023թ. մարտի 26-ին տեղի են ունենալու Սիսիան խոշորացված համայնքի համամասնական ընտրակարգով (ավագանու) ընտրություններ:

Սիսիանի տարածաշրջանը բաղկացած է 41 տեղամասային ընտրական հանձնաժողովից: Յուրաքանչյուր հանձնաժողով բաղկացած է 8 անդամներից: Հանձնաժողովի 6 անդամներին նշանակում են Ազգային Ժողովի 3 խմբակցությունները, իսկ 2 անդամին նշանակում են թիվ 34 տարածքային հանձնաժողովի անդամները:

Տեղի է ունեցել խայտառակություն.

ԸԸՀ գորիսյան անդամների կողմից տեղամասային հանձնաժողովներում անդամներ են նշանակվել հիմնականում Գորիս համայնքում բնակվող իրենց ընտանիքների ներկայացուցիչներից, հարազատներից եւ ընկերներից: Երեւույթը մեծ դժգոհություն եւ աղմուկ է բարձրացրել Սիսիան համայնքի՝ լիցենզիա ունեցող մի քանի տասնյակ քաղաքացիների մոտ, որոնք որոշել են չմասնակցել ընտրություններին եւ բոյկոտել են:

ԸԸՀ-ի անդամ, Գորիս քաղաքի բնակիչ Մարինե Բակունցը տեղամասային հանձնաժողովներում անդամներ է նշանակել Գորիս համայքում բնակվող իր երկու տղաներին ՝ Արմեն եւ Արտակ Մկրտչյաններին, աղջկան՝ Անի Մկրտչյանին, քրոջը՝ Կարինե Բակունցին, իր եւ իր ամուսնու բարեկամներ Կորյուն եւ Կարեն Դաջունցներին, Արամ եւ Դավիթ Բաբայաններին, Նարեկ Տոռոզյանին, Դոնարա Դիլանյանին եւ այլոց□

Հանձնաժողովի նախագահ Արմեն Ստեփանյանն անդամներ է նշանակել Գորիսում բնակվող իր տղաներ Էրիկ եւ Գարիկ Ստեփանյաններին, իր կնոջը եւ մի քանի բարեկամների (ցանկության դեպքում ամբողջական ցանկը անձամբ կարող է ճշտել պարոն Վահագն Հովհաննիսյանը):

Հանձնաժողովի Գորիս համայնքի բնակիչ Անի Հայրապետյանը անդամներ է նշանակել Գորիս քաղաքում բնակվող իր հորը՝ Խաչատուր Հայրապետյանին, բարեկամներ Քրիստինե եւ Լիլյա Մաթեւոսյաններին, Կարինե Մարտիրոսյանին, Անուշ Ծատրյանին եւ այլ «խիստ կարիքավոր» բարեկամների, նույն ձեռագիրն են կիրառել նաեւ ՏԸՀ-ի մյուս անդամները:

Փաստորեն, լիցենզիա ունեցող, բայց ծանոթներ չունեցող լիցենզավորված մասնագետները մնացել են պրոցեսից դուրս, ասել է թե՝ Սիսիան համայնքի ընտրություններում հանձնաժողովներում անդամներ են նշանակվել 50-ից ավելի Գորիս համայնքի բնակիչներ: Ահա ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանի կազմակերպած առաջին ընտրությունը. ծանոթով հանձնաժողովականներ:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Աչալրջորեն հետեւում եմ դատաիրավական համակարգում ընթացող բարեփոխումներին, որոնց կարեւորությունը դժվար է գերագնահատել»,- երեկ՝մարտի 20-ին, Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի հետ հանդիպման ժամանակ նշել է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը:

Իր խոսքում Վահագն Խաչատուրյանը նշել է. «Կարծում եմ՝ մեր պետության մեջ իրականացվող բարեփոխումների հաջողությունը պայմանավորված է լինելու նաեւ, թե ինչպիսին են այդ բարեփոխումները լինելու դատական համակարգում: Ամենաշատ սպասելիքները հենց այդ համակարգից են, եւ ես հույս ունեմ, որ Ձեր գլխավորությամբ Բարձրագույն դատական խորհուրդն իսկապես հաջողությունների կհասնի, եւ մենք՝ որպես քաղաքացիներ, վստահ կլինենք, որ իշխանության թեւերից մեկը՝ դատական իշխանությունը, Հայաստանի Հանրապետությունում իսկապես արդարադատություն կիրականացնի»:

Կարեն Անդրեասյանը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նշել է.

«Պարոն նախագահ, նախ շատ շնորհակալ եմ այս հնարավորության համար՝ հանդիպման համար: Նաեւ ուզում էի ասել, որ լրանում է իմ պաշտոնավարման առաջին կիսամյակը, եւ մեր այսօրվա հանդիպման ժամանակ Ձեզ որոշ մանրամասներ կներկայացնեմ, թե ինչ հաջողվեց անել այս առաջին կիսամյակում»:

Հանդիպման ընթացքում ԲԴԽ նախագահն անդրադարձել է դատաիրավական համակարգում ընթացող բարեփոխումներին եւ վերջիններիս առնչությամբ Հանրապետության նախագահին է ներկայացրել մի շարք մանրամասներ, ինչպես նաեւ ԲԴԽ կողմից իրականացվող համալիր ծրագրերն ու արվող քայլերը:

ԵՐԿԿՈՂՄ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Փոխվարչապետ Միհր Գրիգորյանն ընդունել է Բելառուսի Հանրապետության փոխվարչապետ Պյոտր Պարխոմչիկի գլխավորած պատվիրակությանը եւ քննարկել երկու երկրների միջեւ առկա համագործակցությանն առնչվող հարցեր:

Երկուստեք կարեւորվել է համագործակցությունը գյուղատնտեսության, մեքենաշինության եւ արդյունաբերության այլ ոլորտներում, ինչպես նաեւ առկա ներուժի լիարժեք իրացումը համատեղ կոոպերացիոն նախագծերի շրջանակներում:

Մտքեր են փոխանակել նաեւ երկկողմ եւ ԵԱՏՄ բազմակողմ օրակարգի շրջանակներում փոխշահավետ համագործակցության հնարավոր նոր ուղղությունների շուրջ:

ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՆ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

2023թ. մարտի 13-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, Երեւան քաղաքի Աղոնցի փողոցում ապօրինի թմրանյութ դահեկու եւ իրացնելու կասկածանքով BMW մակնիշի ավտոմեքենայի մեջ հայտնաբերվել եւ Ոստիկանություն է տեղափոխվել Երեւան քաղաքի 24-ամյա բնակիչ:

Վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է թվով 4 կպչուն ժապավեններով փաթեթավորված դեղնականաչավուն զանգված՝ ընդհանուր 4 գրամ քաշով, ինչպես նաեւ սպիտակ գույնի բյուրեղանման զանգված՝ ընդհանուր 0.17 գրամ քաշով:

Վերոգրյալի հիման վրա մարտի 14-ին ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի եւ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով՝ երիտասարդը ձերբակալվել է:

Անձնական խուզարկությամբ հայտնաբերված զանգվածների վերաբերյալ նշանակվել է դատաքիմիական փորձաքննություն, որով պարզվել է, որ փաթեթներից մեկում առկա սպիտակ գույնի բյուրեղանման զանգվածը հանդիսանում է Մեթամֆետամին տեսակի թմրամիջոց:

Քննությամբ տվյալներ են ստացվել այն մասին, որ 24-ամյա երիտասարդը, չունենալով թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու, առաքելու կամ դրանք իրացնելու թույլտվություն, իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել եւ իր մոտ ապօրինի պահել վերոնշյալ թմրամիջոցը:

Առկա են նախնական տվյալներ այն մասին, որ վերջինս օգտվել է «Տելեգրամ» հավելվածի՝ թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի առցանց վաճառքի հայտնի հարթակներից՝ օգտագործելով կրիպտոարժույթ, ինչպես նաեւ առերեւույթ մասնակցություն է ունեցել Երեւան քաղաքի համապատասխան վայրերում փաթեթավորված թմրանյութեր տեղադրելու գործընթացում:

Դեպքի վայրի զննությամբ երտասարդի կողմից մատնանշած հասցեի մոտ հայտնաբերվել է 1 ստվարաթղթե փաթեթ՝ լցոնված դեղնականաչավուն զանգվածով, իսկ BMW մակնիշի ավտոմեքենայում կատարված խուզարկությամբ ավտոմեքենայի սրահում թղթե փոքր արկղի միջից հայտնաբերվել է թվով 20 հատ, ընդհանուր մոտ 17,09 գրամ քաշով փայլաթիթեղով եւ գունավոր լենտերով փաթեթավորված փաթեթներ, իսկ բեռնախցիկից հայտնաբերվել է մեկ հատ փայտից պատրաստված գլանակ, որի մի ծայրին առկա է ապակյա խողովակ:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ միջնորդություն է ներկայացվել վարույթով հսկող դատախազին 24-ամյա երիտասարդի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը բավարարվել է, եւ վերջինիս ներկայացվել է մեղադրանք:

Վարույթն իրականացնող քննիչը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց՝ 2 ամիս ժամկետով կալանավորումն ընտրելու վերաբերյալ, որը եւս բավարարվել է, եւ անձը տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Նախաքննությունը շարունակվում է: Հայտնաբերված փաթեթներում առկա Մարիխուանա եւ Մեթանֆետամին տեսակի թմրանյութերի նմանվող պարունակության առնչությամբ նշանակվել են փորձաքննություններ: Ձեռնարկվում են ծավալուն քննչական եւ վարութային գործողություններ, ինչպես նաեւ ոստիկանության կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման աղբյուրը, շրջանառության ամբողջական շղթան, դրանում ներգրավված անձանց շրջանակը բացահայտելու ուղղությամբ:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՊԱՏԱՀԱՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿԻ ՌԱԶՄԱՄԹԵՐՔ

2023 թվականի մարտի 13-ից 20-ն ընկած ժամանակահատվածում ԱԻ պետական ծառայության կենտրոնական ու շրջանային բաժինների 911 ահազանգման կենտրոններում գրանցվել է 947 զանգ, որից 10-ը՝ տեխնածին, 26-ը կենցաղային բնույթի կանչեր են:

Մյուս բոլոր զանգերը ճանաչողական բնույթի են: Արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման օպերատիվ խմբերի փրկարարները շաբաթվա ընթացքում արձագանքել են բոլոր կանչերին՝ կատարելով փակված 10 դռան եւ 7 վերելակի բացում: Փրկարարների օգնությամբ 3 քաղաքացի տեղափոխվել է բուժհաստատություն: Ճանապարհատրանսպորտային պատահար բնութագրմամբ մարտի 18-ին Ասկերան քաղաքում մեկ դեպք է գրանցվել. Ծահուման փողոցում իրար են բախվել Ասկերան քաղաքի բնակիչների վարած ավտոմեքենաները:

ՃՏՊ-ի հետեւանքով մեկ քաղաքացի մարմնական վնասվածքներով տեղափոխվել է բուժհաստատություն: Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները, փակել գազի բալոնների փականները:

Յոթ օրվա ընթացքում ծառայության հրշեջ փրկարարները կատարել են 17 ելք, իրականացրել հրդեհաշիջման եւ համապատասխան կանխարգելիչ գործողություններ:

ԱԻ ծառայությունը կոչ է անում բնակչությանը, հատկապես՝ գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելիս խստորեն պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, ուշադիր լինել շրջակա միջավայրի, կանաչ տարածքների նկատմամբ, զերծ մնալ հրդեհների բռնկմանը նպաստող գործողություններից:

Փրկարար ուժերի վարչության սակրավորական խմբերը, «Հումանիտար ականազերծման կենտրոն» հիմնադրամի եւ The Halo Trust ականազերծող կազմակերպության հետ շարունակում են իրականացնել չպայթած եւ կյանքի համար վտանգ ներկայացնող զենք-զինամթերքի հայտնաբերման եւ ոչնչացման աշխատանքները:

Մարտի 13-ից 20-ն ընկած ժամանակահատվածում հետախուզական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է շուրջ 301 միավոր տարբեր տեսակի ու տրամաչափի ռազմամթերք:

Բնակչության կանչերի արձագանքմանը զուգահեռ, շարունակվում են ԱԻ պետական ծառայողների մասնագիտական հմտությունների կատարելագործմանն ուղղված միջոցառումները, որոնք ամենօրյա դասընթացների տեսքով իրականացվում են ԱԻՊԾ տնօրենի հրամանով՝ տարվա պլանային միջոցառումների համաձայն:

Ներքին անվտանգության պատշաճ ապահովման, բնակչությանը օգնելու եւ սպասվող վտանգները կանխելու նպատակով ՆԳ նախարարության բոլոր ծառայություններն ու ստորաբաժանումները աշխատում են շուրջօրյա համակարգված ռեժիմով:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐՎԱԾԵԼ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Սինամ Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով «Գավառի Ս. Քոչարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 4-րդ դասարանի դասղեկը, նույն դպրոցի 2-րդ հարկում գտնվող դասասենյակում ձեռքերով մեկից ավելի անգամ հարվածներ է հասցրել իրենից կախվածության մեջ գտնվող նույն դպրոցի 4-րդ դասարանի անչափահաս աշակերտներ Նարեկ Գրիգորյանի դեմքին եւ Սարգիս Աբրահամյանի դեմքին, ինչի հետեւանքով վերջիններիս պատճառվել է ֆիզիկական ցավ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱ ԱՐԳԵԼԱՓԱԿՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻ

Մարտի 19-ին՝ ժամը 19:05-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն տեղեկություն է ստացվել, որ Երեւանի Հյուսիս-Հարավ ավտոճանապարհին տեղի է ունեցել ՃՏՊ. կա արգելափակված քաղաքացի: Դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ եւ Փրկարարական ուժերի վարչության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարական խումբը: Պարզվել է, որ Հյուսիս-Հարավ ավտոճանապարհին՝ «Մաքս օիլ» բենզալցակայանի մոտակայքում, Opel Astra G մակնիշի ավտոմեքենան (վարորդ՝ Ա. Ե., ծնված 1990 թ.) շրջվել է. կա տուժած: Մինչ փրկարարների՝ կանչի վայր հասնելը Ա. Ե.-ն ավտոմեքենայից դուրս է բերվել տեղի ուժերով, տեղում ստացել առաջին բուժօգնություն, այնուհետեւ՝ հոսպիտալացվել «Արմենիա» ՀԲԿ: Փրկարարներն ուղղել են ավտոմեքենան, դուրս բերել երթեւեկելի հատվածից, հոսանքազրկել, փակել գազի բալոնի փականը եւ սահմանազատել տարածքը:

ՎԵՐՋ Է ՏՎԵԼ ԿՅԱՆՔԻՆ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ կյանքին վերջ տված կինն աշխատում էր Էջմիածնի քաղաքապետարանի կոմունալ բաժնում՝ որպես մաքրուհի, եւ գիշերներն իր գործընկերների հետ մաքրում էր Էջմիածին քաղաքի փողոցներն ու բակային հատվածները: Ամուսնացած էր, ու ամուսինը կասկածներ է ունեցել կնոջ մասով, հետապնդել է նրան ու բացահայտում արել: Ամուսինը նրանից պահանջել է, որ հեռախոսը փոխանցի իրեն, սակայն կինը հեռախոսը խփել է գետնին եւ կոտրել: Դրանից հետո ամուսինը նրան հայտնել է, որ տանից իր ունեցածչունեցած իրերը վերցնի ու լքի տունը: Երեկ՝ մինչեւ կախվելը, նա մոտակա խանութներից մեկից դանակ է գնել, փորձել դաստակի երակները կտրելով վերջ տալ կյանքին, սակայն հետո պարան է գնել եւ կախվել: Նա ուներ երկու երեխա: Նշենք, որ Shamshyan.com-ը գրել էր, որ մարտի 20-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Արմավիրի մարզում: Ժամը 08:50-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Վաղարշապատի բաժին օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Էջմիածին քաղաքի Վազգեն 1-ին փողոցում գտնվող չգործող հյուրանոցային համալիրում դի կա: Ոստիկաններն ու քննիչները չգործող հյուրանոցի առաջին հարկում՝ առաստաղից պարանով կախված վիճակում հայտնաբերել են երիտասարդ կնոջ դի:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 17-ից 20-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 138 դեպք, որոնցից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

1572-ԻՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ ԵՆ 47-Ը

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ հարցնելով, թե Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում ընդհանուր թվով քանի ուսուցիչ է աշխատում, նրանցից քանիսն է մասնակցել կամավոր ատեստավորմանը, ատեստավորման գործընթացում ինչ արդյունքներ են ունեցել: Տավուշի մարզպետարանից գրավոր հայտնել են, որ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում է 1572 ուսուցիչ, որոնցից 47-ը մասնակցել են կամավոր ատեստավորմանը եւ ստանում են աշխատավարձի 30-50 տոկոս հավելավճար: Մարզպետարանի պատասխանի մեջ նշված չէ, թե քանի ուսուցիչ է ձախողել կամավոր ատեստավորման գործընթացում: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների մեծամասնությունը չի մասնակցում ատեստավորմանը, որովհետեւ այդ գործընթացի նկատմամբ վստահություն չունի, ատեստավորման համար ուսուցիչների վերապատրաստումներ չեն անցկացվում, ուսուցիչներն ատեստավորման հարցաշարերի հարցերին լիարժեք տեղյակ չեն, քննության համար հատկացված ժամանակը չի բավարարում մեծ թվով հարցերին պատասխանելու համար, հիմնական դպրոցների ուսուցիչների համար նախատեսված քննական հարցերի մեջ ընդգրկված են նաեւ ավագ դպրոցների ծրագրերից հարցեր: Ուսուցիչները մտավախություն ունեն, որ կամավոր ատեստավորմանը մասնակցելու եւ դրանում ձախողելու դեպքում կարող են հեղինակազրկվել իրենց դպրոցի ուսուցիչների, աշակերտների ու նրանց ծնողների աչքերում:

ՏԱՎՈՒՇԻՑ ՆՅՈՒԹԵՐ ԵՆ ՏԱՐԵԼ ԿԱՊԱՆ

Ծննդով Իջեւան համայնքի սահմանամերձ Կիրանց գյուղից, Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի բնակչուհի Նաիրա Գրիգորյանը մարտի 16-ին 20 տոննա նյութեր է տեղափոխել Սյունիք՝ Կապանի սահմանամերձ գյուղերի մարտական դիրքերն ամրացնելու համար: Նաիրա Գրիգորյանը երկար տարիներ ծառայել է ՀՀ զինված ուժերում, մարտական պայմաններում, հակաօդային պաշտպանությունում, անցել է վաստակած հանգստի: Նրա ամուսինը եւ որդին նույնպես ծառայել են սահմանագոտում: Ն. Գրիգորյանը հայտնեց, որ մարտական հենակետերն ամրացնելու համար անհրաժեշտ նյութերը Կապան տեղափոխելու համար ՀՀ պաշտպանության նախարարությունը տրամադրել է բեռնատար ավտոմեքենաներ: Ն. Գրիգորյանը, նախկինում տարբեր անձանց եւ կազմակերպությունների դիմելով, սահմանապահ դիրքերն ամրացնելու համար նյութեր է ձեռք բերել եւ դրանք տեղափոխել Տավուշի մարզի Նոյեմբերյանի, Բերդի եւ Իջեւանի սահմանային դիրքեր:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչությունում ավարտվել է Խաչթառակ համայնքի բնակիչ Ս.Հ.-ի եւ նրա դստեր Մ.Հ.-ի կողմից իրենց հետ համատեղ բնակվող անչափահաս երեխաներին ֆիզիկական ուժեղ ցավ եւ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու, ինչպես նաեւ ծանր մարմնական վնաս պատճառելու հետեւանքով անզգուշությամբ նրանցից մեկին մահ պատճառելու դեպքով քրեական վարույթի նախաքննությունը:

2020թ. օգոստոսի 18-ին ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչությունում հարուցված քրեական գործի քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 2020թ. օգոստոսի 16-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Տավուշի մարզի Խաչթառակ համայնքում գտնվող իրեն պատկանող տանը հանգիստը խանգարելու պատճառով Ս.Հ.-ն ձեռքով հարվածել է իր 6-ամյա անչափահաս թոռան դեմքին, ինչի հետեւանքով վերջինս վայր է ընկել հատակին, գլխով հարվածել բազմոցի ոտնակին՝ ստանալով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ: 2020թ. օգոստոսի 25-ին «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնում 6-ամյա երեխան մահացել է ստացած մարմնական վնասվածքներից:

Բացի այդ, նույն օրը՝ երեկոյան, իրենց առանձնատան բակում իր վրա անվադող նետելու համար տղամարդը փայտով մի քանի անգամ հարվածել է մյուս անչափահաս թոռանը՝ դեպքի պահին 4 տարեկան երեխայի մարմնի տարբեր մասերին, ապա վեր է բարձրացրել նրան եւ գցել հատակին՝ վերջինիս առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս:

Պարզվել է նաեւ, որ տղամարդը իր դստեր հետ, ով հանդիսանում է երեխաներից 4-ի մայրը, երկուսի հորաքույրը, իրենց առանձնատանը համատեղ բնակության ընթացքում՝ մինչեւ 2020թ. օգոստոսի 16-ն ընկած ժամանակահատվածը, պարբերաբար, տարբեր կենցաղային առիթներով դիտավորությամբ ձեռքերով, ոտքերով, փայտով եւ այլ առարկաներով բազմաթիվ հարվածներ են հասցրել 6 անչափահաս երեխաների մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով միջին ծանրության եւ ծանր մարմնական վնասվածքներ, ինչպես նաեւ հոգեկան ուժեղ տառապանք:

Վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից հարուցված քրեական հետապնդման հիման վրա՝ Ս.Հ.-ին վերջնական մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով, 113-րդ հոդվածի 1-ին մասով եւ 119-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ եւ 5-րդ կետերով, որը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 7-րդ եւ 15-րդ կետերին, 167-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ եւ 9-րդ կետերին եւ 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերին:

Վերջինիս դստերը վերջնական մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ եւ 5-րդ կետերով, որը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 6-րդ կետերին:

Նրանց նկատմամբ նախնական փուլում որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, որը հետագայում փոխարինվել է բացակայելու արգելքով:

2023թ. հունվարին վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշում է կայացվել 5 անչափահաս երեխաների նկատմամբ հատուկ պաշտպանական միջոց՝ «պաշտպանվող անձին մոտենալու կամ նրանց հետ շփվելու սահմանափակում» կիրառելու մասին, եւ որոշման մեկ օրինակն ուղարկվել է «ՍՈՍ մանկական գյուղեր» ՀԲՀ-ի Իջեւան մասնաճյուղի տնօրենին:

Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին:

ԼՈՒՐԵՐ

ԳՐԱՆՑՎԵԼ Է 249 ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔ

Մարտի 13-ից 19-ը ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում գրանցվել է 493 դեպք, որից 249-ը՝ արտակարգ, մասնավորապես՝ հրդեհի՝ 182, պայթյունի, քարաթափման, ջրային հաղորդակցման ուղիների պատահարի, ուժեղ քամու, երկրաշարժի, զինամթերքի հայտնաբերման, որոնողափրկարարական՝ 1-ական, թունավորման՝ 5, օձի հայտնաբերման՝ 3, ճանապարհատրանսպորտային պատահարի՝ 56, ինչպես նաեւ կենցաղային կանչի՝ 148, ինքնասպանության փորձի՝ 4, կեղծ ահազանգի՝ 1, հրդեհի ծագման սպառնալիքի՝ 23, հրդեհի կեղծ կանչի՝ 20, եւ 44 այլ դեպքեր:

Եղանակային պայմաններով եւ այլ գործոններով պայմանավորված՝ գրանցվել է տրանսպորտային միջոցների արգելափակման 24 դեպք: Փրկարարներն օգնություն են ցուցաբերել 42 քաղաքացու եւ անվտանգ տարածք տեղափոխել ավտոճանապարհներին արգելափակված 24 տրանսպորտային միջոց:

Նախորդ շաբաթվա ընթացքում տուժել է 100, զոհվել՝ 9 մարդ: Փրկարարական գործողությունների արդյունքում փրկվել է 3 մարդ:

Փրկարար ծառայությունը հորդորում է պահպանել անվտանգության կանոնները:

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է 7 ՆԱԽԱԳԻԾ

ԿԳՄՍՆ-ում կայացել է նախարարությանը կից գիտամեթոդական խորհրդի երկրորդ նիստը, որտեղ քննարկվել են պատմության եւ մշակույթի հուշարձանների նորոգմանը, ամրակայմանը եւ վերականգնմանն առնչվող 7 էսքիզային նախագծեր:

ԿԳՄՍՆ-ից ArmLur.am-ին հայտնում են, որ գիտամեթոդական խորհրդի 16 անդամից նիստին ներկա է եղել 14-ը:

Քննարկված հարցերից են Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի «Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակի 40-ամյակի» այգու հուշարձանի եւ հարակից տարածքի բարեկարգման, Երեւան քաղաքի՝ Արամի փողոցի 54 հասցեում գտնվող հանրապետական նշանակության հուշարձան-շենքի ամրակայման, վերականգնման, փոփոխման եւ կցակառույցի վերակառուցման, ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի Համլետավան գյուղի մատուռի վերականգնման ու տարածքի բարեկարգման եւ այլ նախագծեր:

Նիստում քննարկված հարցերից երկուսը քվեարկությամբ մերժվել են, հինգը՝ որոշակի վերապահումներով արժանացել հավանության:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 40 ՃՏՊ. 4 մարդ զոհվել է, 60-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2023թ-ի ապրիլի 03-ին ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 55 լոտ՝ ոսկյա ջարդոն 4,2 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 58.100 ՀՀ դրամ: Թիվ 49 լոտ՝ ոսկյա զարդեր 12,7 ընդհանուր քաշով (զուտ քաշը 12,2 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 168.900 ՀՀ դրամ: Թիվ 45 լոտ՝ ոսկյա ջարդոն 9,5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 9 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 124.600 ՀՀ դրամ: Թիվ 43 ոսկյա ջարդոն 7 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 96.900 ՀՀ դրամ: Թիվ 10 լոտ՝ ոսկյա ջարդոն 30,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 30 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 415.400 ՀՀ դրամ: Թիվ 27 լոտ՝ ոսկյա ջարդոն 8 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 107.700 ՀՀ դրամ: Թիվ 28 լոտ՝ ոսկյա ջարդոն 6 գր. քաշով 958 հարգի, լոտի մեկնարկային գինը 132.400 ՀՀ դրամ: Թիվ 31 լոտ՝ ոսկյա զարդեր 124,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 120 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.619.000 ՀՀ դրամ: Թիվ 32 լոտ՝ ոսկյա զարդեր 74,3 գր. ընդհանուր քաշով, որից 50,7գր. ընդհանուր աշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 49 գր.) 585 հարգի՝661.000 ՀՀ դրամ, 23,6 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 22,8 գր.) 500 հարգի՝260.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 921.000 ՀՀ դրամ: Թիվ 34 լոտ՝ ոսկյա ջարդոն եւ զարդեր 19 գր. նդհանուր քաշով, որից 10,6գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 10 գր.) 500 հարգի՝113.700 ՀՀ դրամ, 8,4 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 8 գր.) 585

հարգի՝107.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 220.700 ՀՀ դրամ: Թիվ 35 լոտ՝ ոսկյա զարդեր 15,5 գր. ընդհանուր քաշով, որից 4,6գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 4,4 գր.) 500 հարգի՝50.000 ՀՀ դրամ, 10,9 գր. քաշով ոսկյա զարդը 585 հարգի՝147.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 197.000 ՀՀ դրամ:

Թիվ 36 լոտ՝ ոսկյա զադեր 38,4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 37,5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 505.000 ՀՀ դրամ: Թիվ 38 լոտ՝ ոսկյա ջարդոն 28,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 28 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 377.000 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով:

Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով՝ վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00, ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Team Telecom Armenia

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԳՈՐԾԱՐԿՎԵՑ VAR ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան գործարկեց VAR (տեսաօգնության) համակարգը, որի ներդրման աշխատանքները մեկնարկել էին մեկ տարի առաջ: Նախագծի տեխնիկական ապահովումը, մասնավորապես՝ կապը, բոլոր մարզադաշտերի եւ VAR համակարգի միջեւ իրականացնում է Team Telecom Armenia-ն: Խաղերի նկարահանումն ու հեռարձակումն իրականացնում է Vivaro Media ընկերությունը:

Տեսաօգնության համակարգը ֆուտբոլի կանոնների մեջ պաշտոնապես ընդգրկվել է 2018 թվականին: Սրա շնորհիվ մրցավարն իրավունք ունի հանդիպման վիճելի պահերը կրկնապատկերների միջոցով դիտել, որից հետո միայն որոշում կայացնել:

«VAR համակարգի ներդրմամբ Հայաստանը միանում է համաշխարհային ֆուտբոլի առաջատար երկրներին: Այս ընթացքում կատարվել է ծավալուն աշխատանք թե՛ տեխնիկական, թե՛ մարզչական անձնակազմի վերապատրաստման մասով: Հուսով եմ՝ համակարգը կօգնի մրցավարներին ավելի հստակ որոշումների կայացման հարցում, կձեւավորի արդար մրցակցություն ակումբների միջեւ՝ հանգեցնելով հայկական ֆուտբոլի զարգացմանը»,- Վազգեն Սարգսյան մարզադաշտի VAR համակարգի կենտրոնակայանում շրջայցի ընթացքում նշեց ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանը:

Կենտրոնական VAR համակարգը միացված է տարածաշրջանում եզակի օպտիկամանրաթելային NGN ցանցին, ինչը հնարավորություն է տալիս այն օգտագործել հեռավար ցանկացած մարզադաշտում:

«Մեզ համար այս նախագիծը միաժամանակ եւ՛ մեծ պատասխանատվություն է, եւ՛ մեծ մարտահրավեր: Թիմային ուժերով մենք հաջողությանբ իրագործեցինք միջազգային մակարդակի եւս մեկ տեխնոլոգիական նախագիծ»,- նշեց Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը:

Միջազգային չափանիշներին համապատասխան տեսաօգնության համակարգը լավագույնս գործարկելու նպատակով տեխնիկապես վերազինվել է Vivaro Media-ն, իսկ աշխատակազմը անցել է հատուկ վերապատրաստման դասընթացներ:

Vivaro Media հեռուստաընկերության գլխավոր պրոդյուսեր Արտաշես Սարգսյանը նշեց, որ սա բացառիկ երեւույթ է ոչ միայն հայկական ֆուտբոլի պատմության, այլ նաեւ հայկական հեռուստատեսության պատմության համար: «Vivaro Media-ն Հայաստանի միակ հեռուստաընկերությունն է, որն իրականացրել է այսպիսի ծրագիր: Սա աննախադեպ համագործակցության օրինակ է եւ հետաքրքիր փորձ հայկական մեդիա շուկայում: Նախկին 5-ի փոխարեն այժմ խաղադաշտում աշխատում է 8 օպերատոր ու տեսախցիկ:

Նկարահանող խմբի աշխատանքը կրկնապատկվել է: Եթե նախկինում նկարահանում էինք միայն հեռուստադիտողի համար, ապա այժմ՝ նաեւ մրցավարների համար»:

VAR-ը թույլ է տալիս դիտարկել չորս տեսակի վիճելի պահ՝ կանոնների խախտումով խփված գոլ, 11-մետրանոցի նշանակման դրվագ, կարմիր քարտի սխալ ցուցադրում եւ պատժված խաղացողների նույնականացում: Մրցավարը VAR հաղորդումից հետո կարող է ընտրել երեք տարբերակներից մեկը՝ իր որոշումը թողնել ուժի մեջ, հայտարարել դադարի մասին՝ էկրանով դիտելու իրավիճակը, կամ ընդունել տեսաօգնականի առաջարկությունը, չեղարկել սեփական որոշումը:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը:

Առաջիկայում այս ցանցին կմիացվեն Հայաստանի ողջ տարածքում գործող բջջային կայանները, ինչի շնորհիվ զգալիորեն կբարելավվի նաեւ շարժական կապի որակը:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ԲԱՆԿԸ ԲԻԶՆԵՍ ԱԿՈՒՄԲ Է ՀԻՄՆԱԴՐՈՒՄ

«Ակբա» բանկը Հայաստանում բիզնեսների զարգացման, գործարար կապերի ստեղծման, համագործակցության ավելի մեծ հնարավորությունների եւ նոր հեռանկարների ստեղծման նպատակով մարտի 23-ին կմեկնարկի Acba Business Club-ի գործունեությունը:



Acba Business Club-ի մեկնարկի հատուկ հյուրն արհեստական բանականության ոլորտի առաջատար ABBYY ընկերության հիմնադիր, Band of Angels ներդրողների խմբի անդամ Դավիթ Յանն է, ով բանախոսելու է «Ինչպե՞ս հաջողել բիզնեսում. նպատակասլացությո՞ւն, թե՞ համառություն» թեմայով: Այնուհետեւ կկայանա «Բիզնես համայնքի դերն ու կարեւորությունը» թեմայով պանելային քննարկում:

Acba Business Club-ի մեկնարկի միջոցառումը լավ հնարավորություն է նոր գործարար կապեր հաստատելու եւ գործընկերների ցանցն ընդլայնելու համար:

Դառնալով Acba Business Club-ի անդամ՝ ընկերությունների ղեկավարները կկարողանան ներկա գտնվել ակումբի կողմից կազմակերպվող բազմաթիվ միջոցառումների, ինչպիսիք են միջազգային բիզնես իրադարձություններին ու բիզնեսի վերաբերյալ ակտուալ քննարկումներին մասնակցելը, արտերկրից հրավիրված պրոֆեսիոնալ խոսնակների բանախոսություններն ուկնդրելու հնարավորությունը, ակումբի գործընկեր կազմակերպություններից հատուկ պայմաններով SS, մարքեթինգային, մարդկային ռեսուրսների կառավարման, ինչպես նաեւ խորհրդատվական ընկերությունների ծառայություններից արտոնյալ պայմաններով օգտվելու հնարավորությունը, բազմաթիվ այլ առավելություններ:

Ակումբին անդամակցելու, առաջիկա միջոցառումներին, ինչպես նաեւ գործընկերների հատուկ առաջարկներին ծանոթանալու համար անհրաժեշտ է մուտք գործել sme.acba.am կայք:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՊՐԵԼՈՒ Է

«ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԻ ԴԵՐԱՍԱՆՆԵՐՆ ԱՀԱՋԱՆԳՈՒՄ ԵՆ

«Գոյ» թատրոնը «Ֆեյսբուք»-ի իր պաշտոնական էջում հաղորդագրություն է տարածել՝ դիմելով գործընկերներին, ընկերներին, հանդիսատեսին, ու նշել, որ թատրոնն աջակցության կարիք ունի, քանի որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը մտադիր է լուծարել կառույցը: «Հրավիրում ենք 2023-ի մարտի 23-ին՝ ժամը 12:00-ին գալ «Գոյ» թատրոն՝ ի աջակցություն մեզ»,- ասվում է հաղորդագրության տեքստում: Թատրոնին աջակցելու պատրաստակամություն են հայտնել դերասան, ՀՀ վաստակավոր արտիստ Տիգրան Ներսիսյանը, դրամատուրգ, դերասան Վահրամ Սահակյանը, երգահան, երգիչ, գրող Քրիստ Մանարյանն ու այլք: Նրանք տեսաուղերձներ են հրապարակել համացանցում եւ պատմել թատրոնի ստեղծման, բարի ավանդույթների, նվաճումների ու յուրահատկությունների մասին:

«Գոյ» թատրոն-լաբորատորիայի ստեղծման պատմությունը սկսվում է վաղ 1988 թվականից: Այն հիմնադրվել է թատերական գործիչների միությանը կից՝ Խորեն Աբրահամյանի աջակցությամբ: Երիտասարդական էքսպերիմենտալ թատրոնում է սկսվել Արսեն Աբրահամյանի, Սամսոն Ստեփանյանի եւ Արթուր Սահակյանի համագործակցությունը: Այն շարունակվում է «Կամերային» թատրոնում, որտեղ 1981-ից ստեղծագործում էր նաեւ Արմեն Մազմանյանը: Այստեղ էլ չորս ռեժիսորները, միմյանց համախոհներ գտնելով, 1988-ին հեռանում են «Կամերային»-ից՝ իրենց թատրոնը ստեղծելու նպատակով: Համախմբվում են, փոխանակվում մտքերով եւ հաստատվելով Մայր թատրոնի ձեղնահարկում՝ սկսում են «թատրոն կառուցել»: 1988 թվականի դեկտեմբերի 1-ին ստորագրվում է թատրոնի բացման հրամանը, սակայն մեկ շաբաթ անց վրա է հասնում տարերային աղետը՝ Սպիտակի երկրաշարժը: «Գոյ»-ի անձնակազմը մեկնում է աղետի գոտի՝ մասնակցելու փրկարարական աշխատանքների: Կարճ ժամանակահատվածում բեմադրվում են Թումանյանի հեքիաթները: Մոտ երեք ամիս խաղում են ներկայացումը եւ հույս ու հավատ ներշնչում անօթեւան մնացած բազմահազարանոց մարդկանց:

1989 թվականի մարտի 1-ին լաբորատորիան բացում է իր դռները լայն հասարակության համար: Թատրոնի հիմնադիրները սկզբից իրենց տեսնում էին որպես ազգային խաղիկների, հայ էպիկական ու գուսանական, Խորենացու վկայաբերած «երգ ցցոց ու պարոցի» հիմքով թատրոն-լաբորատորիա:

Ժամանակի ընթացքում թատրոնն իր առջեւ գեղարվեստական հստակ խնդիրներ է դնում՝ համաշխարհային գեղարվեստական, փիլիսոփայական, թատերական ավանգարդ պրոցեսներով առաջնորդվել եւ ստեղծագործել «Գոյ»-ի բեմում:

ԱՆԻՄԱՑԻՈՆ ՖԻԼՄ

«ԱՎՐՈՐԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՑԸ» ՖԻԼՄԸ

Ժնեւի կինոփառատոնում ռեժիսոր Իննա Սահակյանի «Ավրորայի լուսաբացը» վավերագրական-անիմացիոն ֆիլմը Ժնեւի մարդու իրավունքների միջազգային կինոփառատոնում եւ ֆորումում (FIFDH) արժանացել է գլխավոր մրցանակի. այս մասին հայտնում է Հայաստանի ազգային կինոկենտրոնը: Ռեժիսորը նշում է, որ այն յուրահատուկ մրցանակ է կինոյին եւ մարդու իրավունքներին նվիրված փառատոնում: «Ավրորան պայքարում էր իր ներսում մարդկությունը կենդանի պահելու համար՝ մեղմելով իր ցավը էկրանին, եւ դա նշանակում է, որ նրա առաքելությունը դեռ շարունակվում է եւ երբեք չի մոռացվի: Ավրորան, վերադրելով իր ցավը էկրանին, պայքարում էր մարդկանց իրավունքների համար: Այս մրցանակը վկայում է, որ նրա առաքելությունը շարունակվում է: Հավերժ հիշատակ»,-ասում է Սահակյանը:

Ֆիլմը ներկայացնում է Ավրորա Մարդիգանյանի՝ Հայոց ցեղասպանությունը վերապրելուց մինչեւ հոլիվուդյան աստղ դառնալու ոդիսականը: Հոլիվուդյան համր ֆիլմում վերամարմնավորելով ինքն իրեն՝ դեռատի աղջիկը կրկին վերապրում է Հայոց ցեղասպանության սարսափները՝ նպատակ ունենալով աշխարհին պատմել հայկական Եղեռնի մասին:

Ֆիլմը ստեղծվել է «Ջորյան» ինստիտուտի գիտական աջակցությամբ եւ ինստիտուտի՝ Հայոց ցեղասպանության բանավոր պատմության արխիվի հիման վրա: Այն հայ-գերմանալիտվական համատեղ արտադրության կինոնախագիծ է (արտադրող ընկերություններ՝ «Բարս մեդիա», Gebrueder Beetz Filmproduktion, Artbox Laisvalaikio Klubas): Ռեժիսոր եւ սցենարիստ՝ Իննա Սահակյան, պրոդյուսերներ՝ Վարդան Հովհաննիսյան, Քրիստիան Բից, Յուստե Միխայլինայտե: ՀՀ ԿԳՄՍ նախարարության Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից ֆիլմը ստացել է մասնակի պետական ֆինանսական աջակցություն:

ԼՈՒՐԵՐ

ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎՈՒՄ Է ԾԱՆՐ

Հայաստանի վաստակավոր արտիստ Լուսինե Կիրակոսյանը շարունակում է գտնվել Էրեբունի բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում հայտնեց դերասանուհու բարեկամուհին, ով այս պահին հիվանդանոցում խնամում է նրան:

«Դեռեւս վիճակը գնահատվում է ծանր, այլ բան ասել չեմ կարող: Միայն կարող եմ ասել, որ Լուսինե Կիրակոսյանի բոլոր կոլեգաները եւ բարեկամները մշատապես հետաքրքրվում եւ շատ անհանգստացած են նրա առողջության վատթարացման համար»,-նշեց մեր զրուցակիցը:

Հիշեցնենք, որ մարտի 18-ին դերասանուհի Լուսինե Կիրակոսյանի առողջական վիճակը կտրուկ վատացել էր:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՊԵՏՔ Է ՀՐԱԺԱՐՎԵՆ iPhone–ԻՑ

Ռուսաստանի նախագահի աշխատակազմի աշխատակիցներին խնդրել են ազատվել ամերիկյան Apple ընկերության սմարթֆոններից: Նախագահի աշխատակազմն արդեն ստացել է, իսկ տարածաշրջանի պաշտոնյաները շուտով կստանան առաջարկություններ՝ կապված ամերիկյան սմարթֆոններն այլ օպերացիոն համակարգով հեռախոսներով փոխարինելու հետ: Մարտին Մերձմոսկովյան մարզում տեղի ունեցած սեմինարի ժամանակ պաշտոնյաներին ասել են, որ ապրիլի սկզբին պետք է ազատվել iPhone-ներից:

«iPhone-ին վերջ: Կամ դեն նետեք, կամ տվեք երեխաներին: Բոլորը պետք է դա անեն մարտին»,- ասել է սեմինարի մասնակիցներից մեկը: Կառույցի աշխատակիցները քննարկել են արգելքի անհրաժեշտությունը, սակայն վերջնական որոշումը կայացրել է վարչակազմի ղեկավարի առաջին տեղակալ Սերգեյ Կիրիենկոն, որը որոշել է մինչեւ ապրիլի 1-ն ազատվել ամերիկյան սմարթֆոններից:

Այդ միջոցները ձեռնարկվում են՝ անվտանգության նկատառումներից ելնելով, քանի որ Apple-ի արտադրանքն «այլ սմարթֆոնների համեմատ ավելի է ենթակա կոտրման եւ լրտեսության՝ արեւմտյան մասնագետների կողմից»:

ԴԺԳՈՀԵԼ ԵՆ ՄՐՑԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Իտալիայի փոխչեմպիոն Միլանի «Ինտերի» իտալացի գլխավոր մարզիչ Սիմոնե Ինզագին Իտալիայի առաջնության 27-րդ տուրում Թուրինի «Յուվենտուսից» կրած 0:1 հաշվով պարտությունից հետո դժգոհել է մրցավարությունից: Գոլային գրոհի ժամանակ ֆրանսիացի կիսապաշտպան Ադրիեն Ռաբյոն ձեռքով էր խաղացել նախքան սերբ կիսապաշտպան Ֆիլիպ Կոստիչին գոլային փոխանցում կատարելը:

«Բաց թողեցինք գոլ, որն անթույլատրելի է VAR-ի դարաշրջանում: Անընդունելի եւ վիրավորական է մրցավարներից լսել, թե կրկնապատկերում հստակ չի երեւում: Ցավալի է, եւ մենք պահանջում ենք ներողություն: 20 տարբեր կադրերում տեսա, որ ձեռքով խաղ է եղել: Դժվար է այսքանից հետո մեկնաբանել խաղի արդյունքը»,- ասել է Ինզագին:

«Ինտերը» 50 միավորով երրորդն է, «Յուվենտուսը» 7-րդն է՝ 50 միավոր:

● *Մարտի 22-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Տղաները չափն անցնում են» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-6000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կոնկրետ ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ բակալավրի կրթական ծրագրով բուհ ընդունվելու համար:

Նելլի Մնոյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ բակալավրի ու անընդհատ եւ ինտեգրացված կրթական ծրագրով բուհ ընդունվելու համար դիմորդը ներկայացնում է հետեւյալ փաստաթղթերը՝

- լուսանկարով տեղեկանք՝ ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ),
- 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիր, կացության վկայական):
- անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրվող, անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ,
- զինվորական գրքույկ եւ զինվորական կոմիսարիատից տեղեկանք՝ ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու, ծառայության վայրի եւ ծառայողական բնութագրի մասին,
- արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր,
- միջազգային եւ հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները,
- ներբուհական յուրաքանչյուր քննությանը մասնակցելու, ինչպես նաեւ փաստաթղթերն ընդունելու եւ ձեւակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ դիմորդներն ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ եւ ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են մասնագիտությունները՝ ըստ ուսուցման անվճար եւ վճարովի համակարգերի: Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի՝ մինչեւ երկու անվճար եւ մինչեւ ութ վճարովի մասնագիտությունների մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտությունների համար սահմանված բոլոր քննությունները:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՎԱՐԿԵՐ

ՀԱՐՑ. Իրավունք ունի՞ արդյոք բանկը կամ վարկային կազմակերպությունը տեղեկություններ ստանալ իմ վարկային պատմության կամ այլ բանկերում գործող վարկերի մասին:

Մնուշ Հարությունյան (25 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ, այո՛, բանկը կամ վարկային կազմակերպությունը կարող է հարցում կատարել վարկային ռեգիստր՝ ստանալով տեղեկատվություն՝ իրեն դիմած քաղաքացու վարկային պատմության վերաբերյալ:

Վարկային ռեգիստրի կողմից տրամադրված տեղեկատվությունը բանկը կամ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պետք է օգտագործի բացառապես վարկառուին վարկ տրամադրելիս կամ վարկառուի վարկարժանությունը գնահատելու նպատակով: Վարկատուն կարող է տեղեկատվություն պահանջել միայն վարկ ստանալու նպատակով իրեն դիմած կամ վարկատուից ստացված եւ չմարված վարկ ունեցող անձանց մասին:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե վարկը դասակարգվում է վարկային ռեգիստրում, ապա վարկային ռեգիստրում վարկի վերաբերյալ այլ տվյալների հետ միասին նշվում է նաեւ երաշխավորի անունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Հայաստանում սնահավատությունը այն կետին է հասել, որ ոմանք իրենց համար նոր բիզնեսի աղբյուր են գտել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **20.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: